



ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԶԵՆՖԻՐԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՄԱՐԻՆԵ ՏՈՆՈՅԱՆ

ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դասախոս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԷՖԵԿՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Արտաքին էֆեկտներով առաջացած անարդյունավետությունը կապված է շուկայական գնագոյացման թերությունների հետ, ինչը չի ապահովում արտաքին սահմանային ծախքերի կամ օգուտների հաշվառում շուկայական գնի մեջ: Հետևաբար՝ կարգավորման խնդրի էությունն այն է, որ գտնվեն արտաքին սահմանային ծախքերը (օգուտները) ներքինի փոխակերպելու միջոցներ:

Տեսականորեն, որոշակի պայմաններում, շուկայական մեխանիզմն ունակ է ապահովելու արտաքին էֆեկտների փոխակերպումը: Երբ սեփականության իրավունքները հստակ սահմանված են, իսկ դրանց փոխանակումը կապված չէ կողմերի զգալի ծախքերի հետ, խնդիրը կարող է լուծվել արտադրողների և արտաքին էֆեկտները ստացողների բանակցությունների միջոցով:

Արտաքին էֆեկտների՝ ներքինի ձևափոխմանը կարելի է հասնել միավորման միջոցով, այսինքն՝ արտաքին էֆեկտն արտադրողների և ստացողների՝ որպես միասնական տնտեսավարող սուբյեկտի ձևավորմամբ: Դա կնպաստի արտադրության ծավալների ճշգրտմանը և ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը:

Արտաքին էֆեկտների՝ ներքին էֆեկտների ձևափոխման անհրաժեշտ պայմանները հաճախ գործնականում դառնում են անհրազորելի, որի պատճառները շատ են: Դրանցից են՝ սեփականության իրավունքի սահմանման դժվարությունները, արտաքին էֆեկտների աղբյուրների որոշման բարդությունը, կողմերի ծախքերի և օգուտների վերաբերյալ տեղեկատվության անբավարարությունը և զգալի ծախքերը, որոնցով սովորաբար ուղեկցվում են ինչպես սեփականության իրավունքների սահմանումը, այնպես էլ բանակցությունների վարումը:

Հիմնաբառեր. արտաքին էֆեկտ, ներքին էֆեկտ, սեփականության իրավունք, սահմանային ծախքեր, ռեսուրսների բաշխման օպտիմալացում, դրական էֆեկտ, բացասական էֆեկտ

JEL: D00, D04

Շուկայական մեխանիզմի օգտագործումն արտաքին էֆեկտների (էքստերնալների) հիմնահարցի լուծման համար ոչ միշտ է արդյունավետ և հնարավոր, ուստի անհրաժեշտություն է առաջանում արտաքին ազդակների կարգավորման՝ ոչ շուկայական միջոցների օգտագործման առումով: Այս գործառույթն իրագործում է պետությունը՝ ապահովելով ուղղումներ (շտկումներ), որոնք ծագում են արտաքին ծախքերի և օգուտների ազդեցություններից՝ կիրառելով վարչական (սահմանափակելով արտադրությունը կամ էլ բարիքների տրամադրումը) և տնտեսական (հարկեր և լրավճարներ) միջոցներ:

Արտաքին էֆեկտների կարգավորումը դրանց վերափոխման միջոց է, որը հանդես է գալիս սահմանափակումների կամ խրախուսման ձևով՝ ուղղված ռեսուրսների օպտիմալ բաշխմանը:


Բացասական արտաքին էֆեկտների դրսևորման հետևանք է բարիքների գերարտադրությունը: Այս առումով, բացասական արտաքին էֆեկտների կարգավորման խնդիրը բարիքի առաջարկի կորի՝ օպտիմալ ուղղությամբ շտկումն է հասարակական սահմանային ծախքերի մակարդակին, բարիքի արտադրության ծավալին համապատասխան: Խնդրի լուծման համար կարող են օգտագործվել տարբեր միջոցներ:

Ստանդարտները, որոնք ներկայացնում են պետության կողմից հաստատվող սահմանափակումներ շրջակա միջավայրն աղտոտող արտադրական թափոնների տեսակների և ծավալների վրա, բացասական արտաքին էֆեկտների կարգավորման առավել տարածված միջոցներ են: Դրանց նպատակը առաջարկի շուկայական ծավալի հավասարակշռության հաստատումն է համապատասխան օպտիմալ բարիքների առաջարկի կրճատման ճանապարհով: Որպես ազդեցության միջոցներ օգտագործում են աղտոտող արտանետումների ծավալների կրճատումը և արտանետումներում թունավոր նյութերի պարունակման նորմերի սահմանումը: Առաջին դեպքում նպատակը ձեռք է բերվում ի հաշիվ թողարկման ծավալների ուղղակի սահմանափակման, իսկ երկրորդ դեպքում՝ ի հաշիվ առաջարկի կորի տեղաշարժման՝ արտադրության ծախքերի աճման արդյունքով, արտադրողների լրացուցիչ ծախսերի հետևանքով՝ պայմանավորված նորմերի պահպանման անհրա-

Ժեշտությամբ (սարքավորումների տեղադրում և թափոնների մաքրման հետ կապված միջոցառումների իրականացում):


Նպաստելով արտաքին էֆեկտների կրճատմանը՝ չափորոշիչների օգտագործումը չի ապահովում ռեսուրսների օպտիմալ բաշխում:

Առաջին՝ դա չի ընդգրկում արտաքին էֆեկտների այն մասը, որն առաջ է գալիս ստանդարտներով թույլատրելի արտանետումների մակարդակով, ուստի արտաքին սահմանային ծախքերը չեն փոխհատուցվում, ինչը նշանակում է, որ ռեսուրսների մի մասը սպառվում է անվճար: Երկրորդ՝ դա, մի կողմից, հաշվի չի առնում ֆիրմաների մասնավոր սահմանային ծախքերի մակարդակներում հնարավոր տարբերությունները, մյուս կողմից՝ արտաքին էֆեկտների տարբեր ստացողների համար հասարակական սահմանային օգտակարության մակարդակները: Եթե ֆիրմաների սահմանային ծախքերը տարբերվում են (գծապատկեր 1), ապա արտանետումների միասնական S ստանդարտի օգտագործումը կհանգեցնի այն բանին, որ փոքր ծախքեր ունեցող ֆիրմաների համար ($MPC^1 - MSC^1$) սահմանված պահանջները կլինեն արդյունավետից բարձր ($Q^1 > Q^S$), իսկ ավելի բարձր ծախքեր ունեցող ֆիրմաների համար ($MPC^2 - MSC^2$)՝ արդյունավետից ցածր ($Q^2 < Q^S$)¹: Քանի որ երկու դեպքում էլ թողարկման հասարակական օպտիմալ ծավալը չի հաստատվում, ուստի ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխումը ևս չի վերացվում:



Գծապատկեր 1. Միասնական ստանդարտի ազդեցությունը ծախքերի տարբեր մակարդակներում


Նման իրավիճակ է հաստատվում նաև այն ժամանակ, երբ առկա են տարբերություններ հասարակական օգուտների մակարդակներում:



Գծապատկեր 2. Միասնական ստանդարտի ազդեցությունը օգուտների տարբեր մակարդակներում

¹ Տե՛ս **Тарануха Ю.В.**, Микроэкономика (2-е изд.). М., “Дело и сервис”, 2009, էջ 268:

Օրինակ՝ քաղաքներում աղտոտման աստիճանն ավելի բարձր է, քան գյուղական վայրերում: Համապատասխանաբար՝ հասարակական օգուտները բարիքների արտադրությունից քաղաքում ավելի փոքր են (MSB^2), քան գյուղական վայրերում (MSB^1): Ուստի միասնական ստանդարտի կիրառման ժամանակ գյուղական վայրերում գործող ֆիրմաները կթողարկեն օպտիմալ մակարդակից ցածր ($Q^1 > Q^S$), իսկ քաղաքում գործող ֆիրմաները՝ օպտիմալից բարձր ($Q^2 < Q^S$), ինչը վկայում է ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման մասին: Այս թերությունների վերացումն անհատական ստանդարտների ներդրման ճանապարհով տնտեսապես հիմնավորված չէ, քանի որ կապված է մեծ վարչական ծախքերի հետ (տեղեկատվության հավաքագրում, մշտադիտարկում և հսկում):



Պատկեր 3. Հարկերի օգտագործումը բացասական արտաքին էֆեկտների կարգավորման նպատակով

Հարկերը, որոնք տրվում են վճարումների պատճառած վնասների դիմաց, արտաքին էֆեկտների կարգավորման մեկ այլ միջոց են: Դրանք կարող են սահմանվել ինչպես թողարկվող բարիքների, այնպես էլ թունավոր արտադրանքների նկատմամբ: Հարկերի (T) ազդեցության մեխանիզմի էությունն այն է, որ արտաքին սահմանային ծախքի մեծությանն առնչվող հարկը ($T=MEC$) բարձրացնում է արտադրության սահմանային ծախքերը մինչև հասարակական սահմանային ծախքերի մակարդակը (գծապատկեր 3)²:

Դառնալով առաջարկի որոշիչ (դետերմինանտ) կոր, այն առաջարկը բարձրացնում է վերև՝ S-ից մինչև S_2 : Արդյունքում տեղի է ունենում թողարկման կրճատում դեպի օպտիմալ ծավալի Q_1 կողմ, իսկ հասարակությունը ստանում է ուղղակի շահում, որը հավասար է վերացված կորուստներին (ABC եռանկյունի), ինչը, սակայն, չի նշանակում հասցված վնասի վերացում: Հարկերի ներդրման հետևանքները պայմանավորված են ֆիրմաների արտադրության ծախքերը նվազագույնի հասցնելու այլընտրանքային միջոցների առկայությամբ, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել հարկերի ներդրված ժամանակ: Եթե ֆիրմաները սեփական շահույթի մաքսիմալացման տեսանկյունից առավել շահավետ են համարում հարկերի վճարումը՝ կրճատելով թողարկումը, ապա այս պարագայում հասցվող վնասը միայն կփոքրանա, մեր դեպքում, մինչև $(P_1 - P_3)Q_1$ չափը: Երբ հարկերը ֆիրմաներին զրկեն շահույթից, ապա կդադարեցվի արտադրությունը, իսկ եթե ֆիրմաները թունա-

² Տե՛ս Тарануха Ю.В., նշվ. աշխ., էջ 273:

վոր արտանետումների կրճատման նպատակով ունենան միջոցներ, որոնց ծախսերը բարձր են հարկերից, ապա կկատարելագործեն տեխնոլոգիաները, ինչի շնորհիվ վնասակար ազդեցությունները կկրճատվեն կամ էլ ամբողջությամբ կվերացվեն:

Հարկերի օգտագործումն ունի մի շարք առավելություններ: Ի տարբերություն ստանդարտների, դա չի պահանջում դժվարամատչելի տեղեկատվության հավաքագրում՝ կապված արտանետումների նվազեցման սահմանային ծախսերի հետ: T հարկի օգտագործումը չի ավելացնում ֆիրմաների ծախսերն աղտոտման նվազեցման համար (MC_a^1 և MC_a^2) և ունակ է ապահովելու արտանետումների նույն մակարդակն ավելի ցածր ծախսերի պարագայում ($MC_b^T < MC_b^S$), քան S ստանդարտների օգտագործման դեպքում է³:


Քանի որ ֆիրմաները կարող են օգուտ ստանալ՝ որպես տարբերություն արտանետումների կրճատման և հարկի ծախսերի միջև, ուստի հարկերը հզոր խթան են դառնում ֆիրմաների արտանետումների մակարդակը կրճատելու համար՝ ի հաշիվ տեխնոլոգիայի կատարելագործման, իսկ հարկերը նպաստում են պետեկամուտների աճին (գծապատկեր 4. ա):

Հարկերի օգտագործումը գործնականում որոշակի դժվարություններ ունի:


- Անմիջական կոռեկցիայի բացակայությունը թողարկման ծավալի և աղտոտման մակարդակի միջև չի ապահովում արտաքին էֆեկտի ինտերնալացումը, ինչը պահանջում է վերջինիս աղբյուրի հստակ որոշում և հարկի սահմանում վնասաբեր արտանետումների յուրաքանչյուր տեսակի պարագայում, իսկ դա էլ կապված է զգալի լրացուցիչ ծախսերի հետ:
- Հարկերը հանգեցնում են գների աճին:
- Հարկերի T_1 սահմանման ժամանակ թույլ տրված սխալները (գծապատկեր 4. բ) պատճառ են դառնում ավելի լուրջ սահմանային հասարակական ծախսերի ($MSC^T > MSC^S$), քան ստանդարտների S_1 օգտագործման ժամանակ:
- Հարկերի օգտագործումը չի երաշխավորում հասցվող վնասի վերացումը, ինչը երկարաժամկետում կհանգեցնի անվերադարձ հետևանքների:
- Այն դեպքերում, երբ արտաքին էֆեկտ ստացողներն օժտված են դրանց վերացման ավելի էժան միջոցներով, հարկադրումը ընդհանրապես անարդյունավետ է:

Արտաքին էֆեկտների կարգավորման խնդիր է համարվում ոչ թե աղտոտման վերացումը, այլ ռեսուրսների արդյունավետ բաշխման ապահովումը: Սա նշանակում է, որ աղտոտման նկատմամբ վերահսկման արդյունավետ մակարդակը հաստատվում է այն ժամանակ, երբ սահմանային հասարակական ծախսերը հավասարվում են սահմանային հասարակական օգուտներին: Այս առումով, արտաքին էֆեկտների կարգավորման հիմնահարցը ռեսուրսների բաշխման արդյունավետության մակարդակի բարձրացումն է ձեռքբերվի բացասական արտաքին էֆեկտների վերացման, անհրաժեշտ ֆիրմային ծախսերի նվազեցման պայմաններում: Նման խնդրի լուծումը հնարավոր է աղտոտման իրավունքի շուկայի ստեղծման ճանապարհով, որտեղ այդպիսի իրավունքները ազատ կարող են գնվել և վաճառվել:

³ Տես **Нуреев Р.М.**, Микроэкономика. М., “Норма”, 2010:




Չժապատկեր 4. ա



Չժապատկեր 4. բ

Լիցենզիաները ներկայացնում են աղտոտող նյութերի արտանետման հնարավոր միջոցներից մեկը: Սահմանելով աղտոտման թույլատրելի ծավալը՝ պետությունը թողարկում է այդ ծավալին հավասար քանակությամբ լիցենզիաներ: Քանի որ լիցենզիաների S առաջարկը խիստ սահմանափակ է, ուստի վերջինիս գինը կախված կլինի պահանջարկից (D):

Լիցենզիայի գինը



Լիցենզիայի քանակը

Չժապատկեր 5. Աղտոտման իրավունքների շուկա

Լիցենզիաների շուկայում համապատասխան մեխանիզմի գործողությունը կնպաստի, որ արտանետման իրավունքները փոխանցվեն այն ֆիրմաներին, որոնք ունեն արտանետումների կրճատման ավելի ցածր ծախսեր: Բացի դրանից, ռեսուրսների օգտագործման իրավունքները կգնվեն նաև այլընտրանքային նպատակների օգտագործման համար, ինչը համարժեք է լիցենզիաների առաջարկի կրճատմանը (S') և դրանց գնի բարձրացմանը (P'): Որոշ ֆիրմաներ ստիպված կլինեն կրճատել թողարկումը կամ էլ ներդնել թողարկման առավել կատարելագործված եղանակներ: Այն ֆիրմաները, որոնց համար լիցենզիայի գինը բարձր կլինի թունավոր արտանետումների կրճատման նպատակով կատարած ծախսերից, ստիպված կլինեն դադարեցնել արտադրությունը, ինչն էլ կապահովի արտանետման իրավունքի փոխանցումը այն ֆիրմաներին, որոնք ունեն թունավոր արտանետումների կրճատման ավելի ցածր ծախսեր: Արդյունքում՝ ավելի ցածր ծախսերի պայմաններում կարելի է հասնել արդյունավետության բարձրացման:

Փոխհատուցման մեխանիզմը ներկայացնում է փոխհատուցման հիման վրա ֆիրմաների միջև համաձայնություն աղտոտման սեփականության իրավունքի փոխանակման մասին, որն օգտագործվում է այն ժամանակ, երբ լրացուցիչ աղտոտումն անթույլատրելի է: Դրա էությունն այն է, որ ֆիրման կարող է մեկ այլ ֆիրմայից ձեռք բերել արտանետման իրավունք՝ որոշակի վճարի դիմաց կրճատելով արտանետումները:


Վարկավորման մեխանիզմի էությունն այն է, որ ֆիրմաները, որոնք ունեն ավելի ցածր աստիճանի թունավոր արտանետումներ, քան նորմատիվային մակարդակն է, ստանում են ոչ միայն իրավունք («վարկ») նույնաքանակ աղտոտման նորմերի պարագայում, այլ նաև հնարավորություն՝ կուտակելու նմանատիպ «վարկեր»: Եթե ֆիրմային տրվում է նման վարկերի վաճառքի իրավունք, ապա այս կարգավորման եղանակը կարող է հզոր խթան դառնալ արտանետումների ապագա կրճատման համար, քանի որ ստացված «վարկերի» վաճառքը կնպաստի դրանց շահույթի աճին:

Մշտադիտարկում կիրառվում է արտանետումների նորմերի ստուգման համար: Էությունն այն է, որ ֆիրմաներին թույլատրվում է գերազանցել նորմատիվները մեկ արտանետման գծով, եթե դա ապահովում է մեկ այլ տեսակի արտանետման գծով համարժեք իջեցում:

Դրական արտաքին էֆեկտների ազդեցությունն ավելի թույլ է արտադրության արդյունավետ ծավալի և բարիքների օպտիմալ սպառման համեմատությամբ: Այս առումով, դրական արտաքին էֆեկտների կարգավորման խնդիրն այն է, որ բարիքի արտադրության և սպառման ծավալները համապատասխանեն հասարակական սահմանային օգուտների մակարդակին: Քանի որ արտաքին էֆեկտների դրական բնույթը սովորաբար արտահայտվում է բարիքի սպառման ընթացքում, դրական էֆեկտների կարգավորումն ուղեկցվում է բարիքի գնի իջեցմամբ, ինչն էլ մեծացնում է դրա պահանջարկը, հետևաբար՝ թողարկումը:


Լրավճարները տրամադրվում են բարիքի սպառողներին կամ արտադրողներին և համարվում են գործունեության կարգավորման առավել տարածված միջոց: Դրանք կարող են անմիջականորեն տրվել նրանց, ովքեր դրական արտաքին էֆեկտներ առաջացնող բարիքի սպառողներ են: Սուբսիդավորման նման ձևեր կարող են համարվել սննդամթերքի կտրոնները, դրամական վճարումները՝ աղքատ բնակչությանը, կրթաթոշակները, անվճար պատվաստումները և այլն: Եթե բարիքի սպառումն ուղեկցվում է դրական արտաքին էֆեկտով (գծապատկեր 6.ա), ապա պահանջարկի հավասարակշռված ծավալի (Q^*) ժամանակ հասարակական օգտակարության համախառն կորուստները (դրական արտաքին էֆեկտ) կկազմեն $(P_2 - P^*)Q^*$, իսկ արդյունավետության զուտ կորուստները՝ DEF եռանկյան մակերեսին հավասար մեծություն:

Քանի որ սպառման արդյունավետ ծավալը հավասար է Q_1 -ի, ուստի դրան հասնելու համար անհրաժեշտ է սպառողներին բարիքի յուրաքանչյուր միավորի համար տրամադրել լրավճարներ C սահմանային արտաքին օգուտի չափով՝ $C = MEB$: Բարիքի գնի իջեցումը ($P_1 > P_3$) կապահովի բնակչության գնողունակության աճ, և պահանջարկի կորը կտեղաշարժվի ($D \rightarrow D_1$), ինչի արդյունքում, հասարակության տեսանկյունից, բարիքի արտադրությունը կմեծանա մինչև արդյունավետ ծավալը ($Q^* \rightarrow Q_1$): Այս դեպքում կպահանջվեն լրահատկացումներ ($P_1 - P_3$) Q_1 գումարին հավասար:



Պճապատկեր 6. ա

Լրավճարները կարող են նպատակաուղղվել առաջարկի խրախուսմանը (զճապատկեր 6. բ): Այս դեպքում որպես սուբսիդիաների անմիջական ստացողներ հանդես են գալիս արտադրողները, իսկ դրանց ազդեցությունն արտահայտվում է բարիքի արտադրության սահմանային ծախսերի կրճատմամբ և առաջարկի կորի տեղաշարժմամբ ($S \rightarrow S_c$): Գնի իջեցումը ($P^* \rightarrow P_c$) կհանգեցնի սպառման աճին ($Q^* \rightarrow Q_c$): Սակայն անհրաժեշտ է նկատել, որ սուբսիդիայի չափը (C) ավելի մեծ է գնի իջեցման չափից: Սուբսիդավորման այդպիսի օրինակներ են գյուղատնտեսական արտադրությունը, բնակարանային շինարարությունը:



Պճապատկեր 6. բ

Ինչ վերաբերում է դժվարություններին, որոնք ծագում են դրական արտաքին էֆեկտների կարգավորման ժամանակ, ապա դրանք նման են բացասական արտաքին էֆեկտների կարգավորման ընթացքում ի հայտ եկած դժվարություններին՝ ոչ բավարար տեղեկատվություն, լրացուցիչ վարչակառավարչական ծախսեր: Անհրաժեշտ է նաև հիշել, որ սուբսիդավորումը կապված է լրացուցիչ ծախսերի հետ:

Օգտագործված գրականություն

1. Тарануха Ю.В., Микроэкономика (2-е изд.). М., "Дело и сервис", 2009.
2. Нуреев Р.М., Микроэкономика. М., "Норма", 2010.

МИКАЕЛ МЕЛКУМЯН

*Заведующий кафедрой микроэкономики и организации
предпринимательской деятельности АГЭУ,
доктор экономических наук, профессор*

ЗЕНФИРА ТУМАСЯН

*Доцент кафедры микроэкономики и организации
предпринимательской деятельности АГЭУ,
кандидат экономических наук*

ГАЯНЕ ГРИГОРЯН

*Доцент кафедры микроэкономики и организации
предпринимательской деятельности АГЭУ,
кандидат экономических наук*

МАРИНА ТОНОЯН

*Преподаватель кафедры микроэкономики и организации
предпринимательской деятельности АГЭУ*

Задачи и способы регулирования внешних эффектов экономической деятельности. – Неэффективность, вызванная внешними эффектами, связана с недостатками рыночного ценообразования, которое не обеспечивает учета в рыночной цене внешних предельных издержек.

Рыночный механизм способен обеспечить интернализацию внешних эффектов. Когда права собственности установлены, проблема внешних эффектов может быть решена путем переговоров производителей и получателей внешних эффектов. Трансформация внешних эффектов во внутренне достигается посредством слияния, производителей и получателей внешних эффектов в единый хозяйствующий субъект.

Условия, необходимые для интернализации внешних эффектов посредством рыночного механизма, часто оказываются невыполнимыми. На то много причин: трудности установления прав собственности, сложность определения источников внешних эффектов, недостаток информации об издержках и выгодах сторон.

Ключевые слова: *внешний эффект, внутренний эффект, право собственности, предельные издержки (выгоды), оптимизация распределения ресурсов, положительный эффект, отрицательный эффект.*

JEL: D00, D04

MIKAYEL MELKUMYAN

*Head of the Chair of Microeconomics and
Organization of Entrepreneurial Activities at ASUE,
Doctor in Economics, Professor*

ZENFIRA TUMASYAN

*Associate Professor at the Chair of
Microeconomics and Organization of Entrepreneurial
Activities at ASUE, PhD in Economics*

GAYANE GRIGORYAN

*Associate Professor at the Chair of
Microeconomics and Organization of Entrepreneurial
Activities at ASUE, PhD in Economics*

MARINA TONoyAN

*Lecturer at the Chair of Microeconomics and
Organization of Entrepreneurial Activities at ASUE*

Objectives and Methods of Regulating Externalities of Economic Activity.– The existence of inefficiencies caused by external effects is associated with market pricing flaws, which does not include the market price of external marginal cost (benefit) in the internal.

Theoretically under certain conditions, the market mechanism is capable to provide external effects transformation. When the property rights are established the issue of externalities can be solved by means of negotiations between producers and recipients of external effects.

The transformation of external effects into internal can be reached by means of merger, i. e. by uniting producers and recipients of external effects into one economic entity.

The conditions necessary for the transformation of externalities into internal effect are often practically not feasible. It occurs because of many reasons: the difficulties to establish property rights, the complexity of determining sources of externalities, and the lack of information about costs and benefits of the parties and significant costs, which are usually accompanied with a definition of property rights, as well as the process of negotiations.

Key words: *externality, internal effect, property right, marginal cost (benefit), distribution of resources optimization, positive effect, negative effect.*

JEL: D00, D04